ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻՍՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Երևան

Ձեր շնորհավորական հեռագիրը մասնավոր հուզում պատճառեց Մեզ։ Եթե Աստված Մեզ շնորհի ևս մի քանի տարի կյանք պարգևի, պիտի կամենանք շարունակել Մեր գործունեությունը՝ նվիրված մեր Մայր Եկեղեցու առավել ծաղկման և մեր հավատավոր ժողովրդի կյանքի հոգևոր ու բարոյական զարթոնքին ու նրա արդար իղձերի իրականացման։ Աղոթում ենք նաև, որ Ձեզանով սկիզբ առած պատմական հոչակումը ազատ ու ինքնիշխան մայր պետության, անփորձ ու անվտանգ քայլ առ քայլ հասնի նոր բարձունքների, «զի Աստված ընդ մեզ է»։

Ձեզ ու Ձեր բոլոր նվիրյալ գործընկերներին անեներ հավատք, մշտանորոգ եռանդ ու անխառն լավատեսություն։

Օրհնությամբ ու հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 սեպտեմբեր 1990 թ.